ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«08»« փետրվարի »2024թ. ՆՄՈ/ 81 - Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման N 4 հավելվածը, առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.08.2023թ N 103-Ն հրամանի պահանջներով, գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների հավելավճարի տրամադրումն իրականացնելու նպատակով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում» միջոցառման շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 61 508 200 (վաթսունմեկ միլիոն հինգ հարյուր ութ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 41 720 551(քառասունմեկ միլիոն յոթ հարյուր քսան հազար հինգ հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 9 (ինը) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ Ա. Հովհաննիսյանին՝ կնքել գումարի հատկացման պայմանագրեր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-02-06 14:54:42 GMT+4
Հավաստագրված է eID-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան 71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2024 թվականի փետրվարի 08-ի
N ՄՈ/ 81 - Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ «ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԻՆՉև 100 ԱՇԱԿԵՐՏ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԱԿՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ «ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» ՀՈԴՎԱԾՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

h/h	*դպրոցի անվանումը*	*ՀՀ դրամ*
1	2	3
1	Արգինայի միջնակարգ դպրոց	***6669347***
2	Արտամետի միջնակարգ դպրոց	***5946833***
3	Արևադաշտի միջնակարգ. դպրոց	***7865681***
4	Բաղրամյանի/ Բաղրամյան/ միջնակարգ դպրոց	***4901236***
5	Երվանդաշատի միջնակարգ դպրոց	***4509137***
6	Հուշակերտի միջնակարգ. դպրոց	***3790289***
7	Տալվորիկ հիմնական դպրոց	***1568396***
8	Լեռնամերձի հիմնական դպրոց	***2483293***
9	Ֆերիկի հիմնական դպրոց	***3986339***
Ընդամենը		***41720551***

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

08.02.2024

VERIFIED OCSP 08.02.2024 14:31:54 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023